# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 013-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.11.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 4-ՈՒՄ, 24.12.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 201-Ա ԵՎ 20.12.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի <<2025 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 175-Ա որոշման 4-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

2. Արենի համայնքի ավագանու 24.12.2024թվականի թիվ 201-Ա <<Արենի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին>> թիվ 201-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) 2-րդ մասում <<50 մլն>> թիվը փոխարնել <<35 մլն>> թվով,

2) Դադարեցնել 3-րդ կետի գործողությունը:

3. Արենի համայնքի ավագանու 20.12.2024թվականի <<Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող Թադեուս ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,033513հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին>> թիվ 189-Ա որոշման վերնագրի և տեքստի մեջ <<Թադեուս ՍՊԸ-ին>> բառերը փոխարինել <<Վարդգես Լենդրուշի Վարդանյանին>> բառերով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ